ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայն ք. Բյուրեղավան
Վազգեն Ա.Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203
էլ.փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02

10 փետրվարի 2020 թվական

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 (ութ) անդամներ:

Բացակա էին Գեորգի Աղաջանյանը, Արման Խանզադյանը և Վարդան Սուքիասյանը:

<u>Ավագանու նիստին մասնակցում էին՝</u>

Բյուրեղավան համայնքի ղեկավարի տեղակալ Միշա Եղիազարյանը, Նուռնուս բնակավայրի վարչական ղեկավար Մնացական Գևորգյանը, «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի տնօրեն Միքայել Միքայելյանը, Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հայկ Եղյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջատար մասնագետ Շուշիկ Ասատրյանը և Բյուրեղավան համայնքի բնակիչ Արազ Վերդյանը:

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը:</u>

<u>Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը:</u>

Մինչև նիստի օրակարգին անցնելը համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանը հայտարարեց, որ ավագանու տասնմեկ անդամներից նիստին ներկա են ութը, քվորումն ապահովված է և առաջարկեց սկսել նիստը:

<u>Լսեցին</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 10-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

2.«Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2019 թվականի կատարողականը հաստատելու մասին:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 113 բնակարանը Գենադիկ Վլադիմիրի Վարդանյանին անհատույց օտարելու մասին:

4.Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին պաշտոնից ազատելու համաձայնություն տալու մասին:

5.Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թեկնածուին համաձայնություն տալու մասին:

6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 106 և 109 բնակարանները Գալյա Վոլոդյայի Զոփուռյանին անհատույց օտարելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 05-Ա/

Նիստի օրակարգը հաստատելուց հետո ավագանու անդամ Հայկ Վարդևանյանն առաջարկեց օրակարգային հարցերի քննարկումից հետո ևս մեկ հարցի շուրջ խոսել՝ կապված Բյուրեղավան քաղաքի 49 շենքի 14 և 19 բնակարանների հետ:

Օրակարգը հաստատելուց հետո ներկայացվեցին որոշումների նախագծերը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՇՈՒՇԻԿ ԱՍԱՏՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2016 թվականի հունվարի 8-ի N 2-Ն հրամանով հաստատված կարգի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան, Նուռնուս և Զրաբեր բնակավայրերի գույքագրման փաստաթղթերը՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել գույքագրման հանձնաժողովի ներկայացրած Բյուրեղավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝

1) Համայնքի վարչական տարածքի հողերի սեփականատերերի մասին տեղեկանքը (04.02.2020թվականի դրությամբ)՝ համաձայն հավելված N 1-ի.

2) Պաշարների (ներառյալ փոքրարժեք կամ արագամաշ առարկաների) գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 2-ի.

3) Հիմնական միջոցների գույքագրման ցուցակները՝ համաձայն հավելված N 3-ի.

4) Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի և ստացման ենթակա այլ գումարների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 4-ի.

5) Մատակարարումների գծով կրեդիտորական պարտքերի և վճարման ենթակա այլ գումարների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 5-ի.

6) Բյուջեի հետ հաշվարկների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 6-ի.

7) Կանխիկ դրամական միջոցների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 7-ի.

8) Անկանխիկ դրամական միջոցների գույքագրման ցուցակը՝ համաձայն հավելված N 8-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 06-Ա/

<u>Լսեցին</u>

«ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ԵՎ ԴՐԱ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 83-րդ հոդվածի 1-ին մասի, 84-րդ հոդվածի 1-ին մասի «իգ» կետի՝ ավագանին որոշում է.

1.Հաստատել «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի ֆինանսական գործունեության նախահաշիվը և դրա 2019 թվականի կատարողականը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 07-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 113 ԲՆԱԿԱՐԱՆԸ ԳԵՆԱԴԻԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Գենադիկ Վլադիմիրի Վարդանյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 53.34 քմ ընդհանուր մակերեսով 113 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան 123, 124 և 125 սենյակներ) անհատույց օտարել (նվիրել) Գենադիկ Վլադիմիրի Վարդանյանին՝ ծնված 1959 թվականի մարտի 25-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Գենադիկ Վլադիմիրի Վարդանյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 08-Ա/

Լսեցին

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հայկ Կամունիկի Եղյանի դիմումը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Հայկ Կամունիկի Եղյանին պաշտոնից ազատելու:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայկ Կամունիկի Եղյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 09-Ա/

Լսեցին

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ «ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ. ԼԻԼԻԹ ԱՎՈՒՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 35-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետերի ու հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի ներկայացրած՝ Բյուրեղավանի համայնքային «Բարեկարգում և կանաչապատում» համայնքային ոչ առևտրային

կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշոնակատար նշանակելու համար Արազ Անդրանիկի Վերդյանի թեկնածությանը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 10-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 106 ԵՎ 109 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԳԱԼՅԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՁՈՓՈՒՌՅԱՆԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԻՇԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Գալյա Վոլոդյայի Զոփուռյանի դիմումը՝ ավագանին որոշում է.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 15.88 քմ ընդհանուր մակերեսով 106 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան 114 սենյակ) և 13.75 քմ ընդհանուր մակերեսով 109 բնակարանը (նախկին 4-րդ հանրակացարան 117 սենյակ) անհատույց օտարել (նվիրել) Գալյա Վոլոդյայի Զոփուռյանին՝ ծնված 1943 թվականի նոյեմբերի 07-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Գալյա Վոլոդյայի Զոփուռյանի կողմից:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-8 Դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /որոշում N 11-Ա/

Ավագանու որոշումների նախագծերի քննարկումներից հետո Հայկ Վարդևանյանը ներկայացրեց, որ զրուցել են թե՝ 49 շենքի 14 և 19 բնակարանների հարևանների հետ, թե՝ Զատյան Սամվելի տղայի հետ: Այդ մարդկանց՝ նշված բնակարանում մնալ կամ չմնալու հարցը կայացել է նրանում, որ բնակարանը գտնվել է ոչ բարենպաստ պայմաններում, հարևաններն էլ ասել են, որ այդ մարդիկ եկել-գնացել են և տանը հետևել են ու միտք ունեն Հայաստան վերադառնալու, վերանորոգելու այդ բնակարանները:

Հ. Վարդևանյանն ասաց, որ ուզում է այդ ամենը և այն, որ նրանք այլ բնակարան չունեն Հայաստանում, հաշվի առնեն և վերանայեն նշված բնակարանները աճուրդային կարգով օտարելու մասին ավագանու որոշումը:

Համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանն ավագանու անդամին տեղեկացրեց, որ անհրաժեշտ է ներկայացնել այդ հարցի մասին ավագանու հանձնաժողովի որոշումը և որպես - ավագանու հաջորդ նիստի օրակարգի հարց նախապես ներկայացնել աշխատակազմի քարտուղարին:

Այնուհետև աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանը ավագանու անդամներին հրապարակեց 2017թ. համայնքների խոշորացումից մինչ 2019թ. կայացած ավագանու նիստերից ավագանու անդամ Հայկ Վարդևանյանի բացակայությունների պատճառը: Նա բացակայությունների վերաբերյալ տեղեկանք էր ներկայացրել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ից այն մասին, որ նա աշխատում է ընկերության Աբովյանի ԳԳՄ-ի արտադրական անձնակազմում որպես հսկիչ, և նրա աշխատանքային գրաֆիկը 09:00 ից 18:00-ն է, իսկ ուրբաթ օրը՝ մինչև 17:00-ն:

Օրակարգի հարցերը սպառվեցին:

Ավագանու նիստն ավարտվեց:

Ավագանու անդամներ՝

1.ԱՊՐԵՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ _____

2.ԱՍՈՅԱՆ ԱՎԵՏԻՔ _____

3.ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏՅՈՄ _____

4.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՅԿԱՋ _____

5.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԼԱՎԻԿ _____

6.ՇԱՌՅԱՆ ԱՐԳԱՄ _____

7.ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ ՀԱՅԿ _____

8.ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ **Հ. ԲԱԼԱՍՅԱՆ**

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ **Լ. ԱՎՈՒՇՅԱՆ**